ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<12>> Հուլիսի 2021թ. N ՄՈ/248-2021

ք. Արմավիր

<< ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԱՆՎԱՆ N12 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ >> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՎԵՄԻՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 164-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Վեմիր Հովհաննիսյանի 2021 թվականի հուլիսի 12-ի դիմումը.

որոշում եմ՝

1. <<Վաղարշապատի Զորավար Անդրանիկի անվան N12 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Վեմիր Հովհաննիսյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդը 2021 թվականի հուլիսի 16-ից օգոստոսի 19-ը ներառյալ՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:
2. Վեմիր Հովհաննիսյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում <<Վաղարշապատի Զորավար Անդրանիկի անվան N12 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել <<Վաղարշապատի Զորավար Անդրանիկի անվան N12 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տնօրենի տեղակալ Աղավնի Սարգսյանին:
3. Վեմիր Հովհաննիսյանին աշխատանքի մեջ համարել 2021 թվականի օգոստոսի 20-ից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ **Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

Недействительная подпись

VERIFIED OCSP 12.07.2021 18:37:58 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230